



ԿԵՆԱՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԼԱՆՈՒՄ ՄՇԱԿԱԲՈՅՍԵՐԻ ՎԱՅՐԻ ՑԵՂԱԿԻՑՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄ



Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է «Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում» ծրագրի արդյունքների մի մասը: Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող սույն ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Բնութնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):

Հայաստանի Հանրապետությունը, Կենսաբազմազանության մասին կոնվենցիան վավերացրել է 1993 թվականին: Կոնվենցիայի նպատակներն են

- կենսաբազմազանության պահպանությունը
- բաղադրիչների կայուն օգտագործումը
- գենետիկ ռեսուրսների օգտագործումից առաջացող օգուտների արդարացի և հավասար հիմունքներով բաշխումը:

ՀՀ կառավարությունն ընդունեց Կենսաբազմազանության մասին առաջին ազգային զեկույցը և 1999 թվականին Կենսաբազմազանության ռազմավարության գործողությունների ծրագիրը: Այն ուղղված է կոնվենցիայի պարտավորությունների կատարմանը և դրանով առաջին անգամ համալիր վերլուծության ենթարկված երկրում կենսաբազմազանության ձևավորման ու զարգացման բնապատմական առանձնահատկությունները, ուսումնասիրվածության ակնարկը, կենսաբազմազանության բազմազանությունը, հազվագյուտ, անհետացող, էնդեմիկ և ռելիկտային տեսակների բնութագիրը և տարածվածությունը: Բնութագրված են տնտեսական և այլ նշանակության արժեքավոր տեսակներ, որոնց հարուստ բազմազանությունն ու էնդեմիկ տեսակների մեծ քանակությունը հիմք են տալիս փաստելու, որ Հայաստանը համարվում է ազրոկենսաբազմազանության և նրա գենետիկ ռեսուրսների աշխարհի խոշորագույն կենտրոններից մեկը: Տրված է Հայաստանի կենսաբազմազանության in-situ և ex-situ պահպանության ներկա վիճակի վերլուծությունն ու գնահատականը:

Ներկայացված են կենսաբազմազանության օգտագործման հիմնական ձևերը, կենսաբազմազանությունը վտանգող գործոնները և միջսեկտորային հարաբերությունները:

Առանձին բաժին են կազմում կենսաբազմազանության պահպանությունը և կայուն օգտագործումը պայմանավորող հիմնական գործոններն ու ներուժը, օրենսդրական դաշտը, ինստիտուցիոնալ համակարգը:

Կենսաբազմազանության ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը սահմանում է ռազմավարության իրականացման առանձնահատկությունները՝ հաշվի առնելով երկրի ներկա սոցիալ-տնտեսական պայմանները: ՀՀ Կենսաբազմազանության ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը, այլ առաջնահերթությունների շարքում, ճանաչում է բնական ռեսուրսների պահպանության և կառավարման համար իրավական և ինստիտուցիոնալ շրջանակները զարգացնելու ընդհանուր անհրաժեշտությունը: Այն որպես առաջնահերթություն դասում է նաև հետևյալ գործողությունները.

- ազգային հզորությունների թարմացումը՝ կենսաբազմազանության և բնապահպանական մոնիտորինգի համար, ինչպես նաև պահպանվող տարածքների պլանավորում և կառավարում
- բույսերի գենետիկ ռեսուրսների պահպանման համար երկարատև, ֆինանսական աջակցության երաշխավորումը և այլ գործողությունների առավելագույնի հասցնելը, որոնք բերում են ազրոկենսաբազմազանության պահպանության համար տնտեսական, բնապահպանական և սոցիալ տեսանկյունից կայուն լուծումների
- կենսաբազմազանության խնդիրների գյուղատնտեսական փորձառություններում ներառման ապահովում:

Ստորև ներկայացվում են մշակաբույսերի վայրի ցեղակիցների վերաբերյալ զեկույցում առկա տեղեկատվական ամփոփումն ու վերլուծությունը, տեղի ունեցած բացթողումները, որոշ դեպքերում՝ դրանք լրացման առաջարկությունները:

Հայաստանի մշակաբույսերի վայրի ցեղակիցների բնութագիրը

Հայաստանի մշակաբույսերի և նրանց վայրի ցեղակիցների բազմազանության ուսումնասիրությունների ուղղությամբ կատարված աշխատանքները հիմնականում սկսվել են 19-րդ դարի վերջերին: Այն առավել մեծ թափ է առել 1920 թվականից հետո՝ Ն.Ի.Վավիլովի և նրա դպրոցի շնորհիվ: Բազմաթիվ գիտնականների կողմից ճշտվել են մշակովի բույսերի տեսակային կազմը, սորտային բազմազանությունը, դրանց վայրի ցեղակիցները և բնակատեղերը: Բարելավվել և արտադրության մեջ են ներդրվում տեղական բազմաթից սորտեր: Նպատակային ընտրասերմամբ ստեղծվել են մշակովի բույսերի բարձր բերքատու հայրենական բազմաթիվ նոր սորտեր:

Հայաստանում հայտնաբերված են մեծ քանակի մշակաբույսերի վայրի ցեղակիցներ (հացազգիներ, մրգատու ծառեր և այլն), որոնք գենետիկական նյութի առանձնահատուկ աղբյուր են հանդիսանում բուսաբանության համար: Այս պաշարները տնտեսապես մեծ նշանակություն ունեն գենոֆոնդի պահպանության, բույսերի սելեկցիայի, գիտական հետազոտությունների զարգացման առումով:

Հայաստանի մշակաբույսերի և նրանց վայրի ցեղակիցները հիմնականում ներկայացված են հետևյալ խմբերով.

Հ/հ	Խումբ	Ցեղ	Տեսակ	Տարատեսակ
1	Հացահատիկայիններ	4	22	218
2	Հատիկարնդեղեններ	3	6	
3	Կերաբույսեր	21	366	
4	Պտղահատապտղայիններ	22	62	
5	Բանջարաբոստանայիններ	6	65	

Դա կազմում է ընդամենը 521 տեսակ կամ Հայաստանի ֆլորայի մոտ 16%-ը: Մեծ հետաքրքրություն և հարստություն ներկայացնող գենոֆոնդի պահպանության համար, մասնավորապես վայրի հացազգիների տեսակների, ստեղծվել է Էրեբունու արգելոցը, որտեղ աճում են անոթավոր բույսերի 232 տեսակ, այդ թվում վայրի ցորենի 3 տեսակ և 100-ից ավելի տարատեսակներ:

Կենսաբազմազանության ազգային զեկույցում ներկայացված են ծածկասերմերի առաջատար ընտանիքները, ինչպես նաև էնդեմիկ տեսակները և դրանց քանակը:

Ծածկասերմերի առաջատար ընտանիքների անվանումը և քանակը.

Հ/հ	Ընտանիք		Քանակ
1	Բակլազգիներ	Fabaceae	284
2	Դաշտավուկազգիներ	Poaceae	250
3	Կաղամբազգիներ	Brassicaceae	183
4	Վարդազգիներ	Rosaceae	146
5	Նեխուրազգիներ	Apiaceae	126

Ծածկասերմերի առաջատար ցեղերի անվանումը և քանակը.

Հ/հ	Ցեղ		Քանակ
1	Երեքնուկ	Trifolium	30
2	Սոխ	Allium	40

Էնդեմիկ տեսակների քանակական բաշխվածությունը ըստ ընտանիքների

Հ/հ	Ընտանիք		Քանակ
1	Վարդազգիներ	Rosaceae	24
2	Բակլազգիներ	Fabaceae	7
3	Կաղամբազգիներ	Brassicaceae	6
4	Դաշտավուկազգիներ	Poaceae	5
5	Նեխուրազգիներ	Apiaceae	3
6	Կոկոշազգիներ	Grossulariaceae	2

Էնդեմիկ տեսակների քանակական բաշխվածությունը ըստ ցեղերի

Հ/հ	Ցեղ		Քանակ
1	Տանձենի	Purus	12
2	Մասրենի	Rosa	4
3	Հաղարջենի	Ribes	2
4	Մոշենի	Rubus	2

Հայաստանի մշակաբույսերի վայրի ցեղակիցների ուսումնասիրվածության վիճակը

Հայաստանում բարձրակարգ անոթավոր բույսերի վերաբերյալ (350 տեսակ), որոնց թվին են պատկանում մշակաբույսերը և դրանց վայրի ցեղակիցները, կան գիտական հետազոտությունների վրա հիմնված լիարժեք տեղեկատվություն: Սակայն ՄՎՑ-ների հազվագյուտ և անհետացող տեսակները բավարար ուսումնասիրված չեն, անհրաժեշտ են հաշվառման, դրանց վրա ազդեցության բացահայտման ու գնահատման գիտական հետազոտություններ, մոնիտորինգի աշխատանքներ, հիմնավորված լիարժեք տեղեկատվական նյութեր:

«Մշակաբույսերի վայրի ցեղակիցների in-situ պահպանությունը՝ տեղեկատվության կատարելագործված կառավարման և գործնական կիրառման միջոցով» մշակվում է պահպանության ենթակա ՄՎՑ-ների 3-5 առաջնահերթ տեսակների գնահատման մեխանիզմներ:

Մշակաբույսերի վայրի ցեղակիցների պահպանություն (in-situ պահպանություն)

Կենսաբազմազանության, մասնավորապես ՄՎՑ-ների պահպանությունն in-situ պայմաններում առավել արդյունավետ կատարվում է բնության հատուկ պահպանվող տարածքներում (ՀՊՏ): Այստեղ ապահովվում է էկոհամակարգերի հազվագյուտ, անհետացող, էնդեմիկ, ռելիկտային տեսակների պահպանություն բնական միջավայրում:

Ըստ «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի՝ հանրապետությունում, որպես ՀՊՏ-ներ, երաշխավորված են պետական արգելոցները, պետական արգելավայրերը, ազգային պարկերը և բնության հուշարձանները: 1995 թվականին բոլոր պետարգելոցները ընդգրկվել են ՀՀ բնապահպանության նախարարության կառուցվածքի մեջ, ընդ որում «Էրեբունի» և «Սև լիճ» արգելոցները գտնվում էին նախարարության ապարատի անմիջական ենթակայության տակ, իսկ մնացած 3-ը «Հայաստան» ՓԲԸ կառուցվածքում:

«Էրեբունի» արգելոց - ստեղծվել է 1981 թվականին, գտնվում է Մերձարաքսյան ծալքավոր լեռնաշղթաների քայքայված լանջերն, Կոտայքի և Արարատի մարզերի սահմաններում, Երևանի շրջակայքում: Զբաղեցնում է 89 հա տարածք: Այստեղ պահպանվում են լեռնային քսերոֆիտ էնդեմիկ և եզակի բնական համալիրներ: Վայրի հացազգիների գենոֆոնդի պահպանության օջախն է: Գտնվում է լեռնատափաստանի և օշինդրային կիսաանապատի սահմանագծին: չնայած փոքր տարածքին, ունի հարուստ և բազմատեսակ բուսականություն, կազմված 293 տեսակից: Այստեղ ցորենի 100-ից ավելի տարատեսակներ: հանդիպում են նաև այլ հազվագյուտ

անհետացող տեսակներ, որոնք գրանցված են ՀՀ «Կարմիր գրքում»: Ինչպես հայտնի է «Էրեբունի» արգելոցը կոչված է պահպանելու հացազգիների, այդ թվում նաև վայրի ցորենների աշխարհում եզակի գենոֆոնդը:

Մինչ այժմ արգելոցում բացակայում է պահպանիչ գոտին և քաղաքաշինության զարգացման հետևանքով խախտված են էկոհամակարգերը: Հաշվի առնելով հացահատիկային բույսերի վայրի ցեղակիցների պահպանության գիտական ու գործնական անհրաժեշտությունը և համաշխարհային նշանակությունը՝ «Բույսերի Գենետիկ Միջազգային Ինստիտուտը (IPGRI)» աջակցություն է ցուցաբերել «Էրեբունի» արգելոցում պահպանման աշխատանքների իրականացմանը:

Պահպանությունը բնության հատուկ պահպանվող տարածքներից դուրս

Մինչև ԽՍՀՄ-ի փլուզումը Հայաստանում in-situ պահպանությունը հատուկ պահպանվող տարածքներից դուրս կարգավորվում էր մի շարք օրենսդրական ակտերով, այժմ այդ օրենսդրական նորմատիվային ակտերի մի մասը հնացած են ու չեն համապատասխանում տնտեսվարման նոր հարաբերություններին, իսկ նոր օրենսդրական դաշտը դեռևս չի ձևավորվել: Այսօրվա դրությամբ պահպանվող տարածքներից դուրս in-situ ՄՎՑ-ների պահպանությունը ՀՀ բնապահպանության նախարարության կողմից որոշ չափով կարգավորվում է ցանկացած տնտեսական գործունեության էկոլոգիական փորձաքննության միջոցով:

Վայրի բույսերի հավաքի թույլտվությունը նույնպես տրվում է ՀՀ բնապահպանության նախարարության կողմից՝ ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտի եզրակացության հիման վրա:

Սոցիալական, քաղաքական և տնտեսական պայմանների փոփոխությունն անհրաժեշտություն է առաջացրել մշակել համալիր միջոցառումներ՝ նպատակաուղղված բնական պայմաններում ՄՎՑ-ների պահպանմանը: Այս համալիրը պետք է ընդգրկվի խնդրի օրենսդրական ու կազմակերպչական կողմերը, ինչպես նաև էկոլոգիական կրթությունը և հասարակության իրազեկումը:

Ex-situ պահպանություն - Հայաստանում, սկսած 1935 թվականը, ստեղծվել է բույսերի հավաքածուների հարուստ բազմազանություն՝ կազմված 75 ընտանիքի 207 ցեղի շուրջ 1650 տեսակներ, որոնք գտնվում են Երևանի, Վանաձորի և Սևանի բուսաբանական այգիներում և մի շարք դենդրոպարկերում:

ՄՎՑ-ների և նրանց գենետիկ ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվության կարևոր աղբյուր են հանդիսանում ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի, ՀՀ Ագրարային համալսարանի և Հայաստանի բնության պետական թանգարանի հարուստ հավաքածուները:

«Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում» ծրագրի, այսուհետ Ծրագիր, բարենպաստ իրականացումն ապահովելու դեպքում, նախատեսվում է ՄՎՑ-ների ex-situ պահպանության ծրագիր Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ:

Հետզոտական տեղեկատվական բազաներ

ՄՎՑ-ների ոլորտի հետազոտությունները հիմնականում տարվում են՝

- Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի Գիտահետազոտական Ինստիտուտներում (Բուսաբանության ինստիտուտ)
- Գյուղատնտեսության նախարարության Ինստիտուտներում (Բույսերի պաշտպանության ինստիտուտ, Խաղողագործության և պտղաբերության ինստիտուտ, Կիրառական կենսատեխնոլոգիաների ինստիտուտ)
- Բարձրագույն ուսումնական հաստատությունների համակարգում, մասնավորապես՝ պետական համալսարանը և Ագրարային համալսարանը:

Գիտական հետազոտությունները էական նշանակություն ունեն ՄՎՑ-ների պահպանության քաղաքականության մշակման համար: Հետազոտությունների միջոցով որոշվում են մարդածին գործունեության անհրաժեշտությունը և պահպանության առաջնահերթությունը: ՄՎՑ-ների պահպանության քաղաքականության մշակման առաջին քայլը տեսակներկ գնահատումն է:

Բարձրակարգ անոթավոր բույսերի բազմակողմանի նպատակասլաց հետազոտություններն իրականացվում են 1950-ական թվականներից՝ ակադեմիկոս Ա.Թախտաջյանի ղեկավարությամբ «Հայաստանի ֆլորան» բազմահատորյակի հրատարակմամբ: Հայաստանի ֆլորայի 1-9 հատորներում ամփոփված են անոթավոր բույսերի՝ գետնամուշկանմանների, ձիաձետանմանների, պտերանմանների, մերկասերմերի և ծածկասերմերի, մասնավորապես՝ երկշաքիլավորների դասի բոլոր ընտանիքները, որոնք ընդգրկվելու են 10-11-րդ հատորներում: Հետազոտություններ են արվել նվիրված տարբեր կարգաբանական խմբերի օգտակար բույսերի քիմիական բաղադրությանը և կիրառման նշանակությանը, ինչպես նաև դրանց պաշարների որոշմանը: Տեղեկատվական բազան գիտական հաստատություններում պահպանվում է գրադարանների, հաշվետվությունների, հրապարակումների ու հոդվածների, քարտադարանների տեսքով:

Բուսաբանության ինստիտուտը չունենալով տեղեկատվական-վերլուծական կենտրոն, կանոնակարգված տվյալների բազա. տեղեկատվությունը պահպանվում է հաստատության տարբեր օղակներում: Հաստատությունն ունի հարուստ հավաքածուներ, հերբարիումներ, ինչպես նաև հարուստ գրադարան, որը հասանելի է բոլոր այցելուների համար, սակայն դրա մասին գիտեն միայն

համապատասխան մասնագետները: Իստիտուտի տարածքում գործում է էկոկենտրոն, որը փաստորեն Հայաստանի լանդշաֆտների մինի մոդելն է:

Հասարակական իրազեկություն

Բնապահպանության, այդ թվում նաև ՄՎՑ-ների պահպանության վերաբերյալ հասարակության իրազեկությունը Հայաստանում դեռ պատշաճ մակարդակով չի իրականացվում: Աշխատանքներ են տարվելու հասարակության իրազեկման ուղղությամբ, ինչը կնպաստի ՄՎՑ-ների արժեքի և կարևորության վերաբերյալ գիտելիքների/իմացությունների բարձրացմանը, ինչպես քաղաքականություն մշակողների, այնպես էլ հասարակության լայն խավերում:

Գործող օրենսդրական դաշտ

ՄՎՑ-ներին առնչվող հիմնական օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերն են՝

- ՀՀ Սահմանադրություն (1995թ.)
- Բնության պահպանության մասին ՀՀ օրենսդրության հիմունքները (1991թ.)
- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը (1991թ.) և «Հայաստանի Բնության հատուկ պահպանվող տարածքների զարգացման պետական ռազմավարության և գործողությունների ազգային ծրագրի մասին» ՀՀ կառավարության որոշումը (2002թ.)
- ՀՀ Անտառային օրենսգիրքը (1994թ.)
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքը (1995թ.)
- Բուսաբանական հավաքածուներ և առանձին նշումներ ՀՀ տարածքից արտահանելու և ՀՀ տարածք ներմուծելու կարգի վերաբերյալ ՀՀ կառավարության որոշումը
- «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքը (1998թ.)
- «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքը (1999թ.)
- ՀՀ հողային օրենսգիրք (2001թ.)

ՄՎՑ-ների կառավարում

Հայաստանի մարզերում կենսաբազմազանության կառավարման իրավասությունները տրված են նաև մարզային բնապահպանական բաժիններին, որոնք ՀՀ օրենսդրության սահմանված կարգով իրականացնում են կենսապաշարների օգտագործման և պահպանության մի շարք գործառույթներ: Համայնքային հողատարածքներում այդպիսի ֆունկցիաներով օժտված են նաև տեղական կառավարման մարմինները:

Գյուղատնտեսության նախարարությունը (ԳՆ) հիմնական գերատեսչությունն է, որն իրականացնում է ագրոկենսաբազմազանության կառավարումը (մշակաբույսերը և դրանց վայրի ցեղակիցները հանդիսանում են ագրոկենսաբազմազանության բազկացուցիչ մաս):

1997 թվականի նոյեմբերի 20-ին ՀՀ կառավարության թիվ 548 որոշմամբ, գործում են գյուղատնտեսության նախարարության համակարգում ագրոկենսաբազմազանության հետ առնչվող կառավարման և հսկողության կառուցվածքները, որոնցից են.

- բուսաբուծություն
- սերմնաբուծություն
- տնկարանային տնտեսություն

1996 թվականի դեկտեմբերի 27-ին ՀՀ կառավարության թիվ 392 որոշմամբ ագրոկենսաբազմազանության հսկողության ֆունկցիան դրված է մարզային ագրարային տեսչության վրա:

Համաձայն գործող օրենսդրության՝ բոլոր նոր տնտեսվարող ձեռնարկությունները գործունեություն սկսելու համար, պետք է ԲՊՆ-ից թույլտվություն ստանան: